ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

*26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թ.*

*ԹԻՎ 2189*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն Ի Ն

Էլեկտրոնային տարբերակով Ձեզ է ուղարկվում Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու կողմից 2017թ. դեկտեմբերի 21-ին ընդունված որոշումները /արձ. 13/:

Առդիր՝ 39 էջ:

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Կատարող՝*
*Գ. Դապումյան*
*/0232/3-52-02*

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***<u>N 1 – Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 21.12.2017թ. նիստի օրակարգը /կցվում է/:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ*

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշտարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

   */Զեկուցող ՝ Թ. Շահվերդյան/*

2. Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

   */Զեկուցող ՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ քաղաքի 2018 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

   */Զեկուցող ՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   */Զեկուցող ՝ Շ. Վահանյան/*

5. Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ. թիվ 5-Ա, 15.11.2017թ. թիվ 6-Ա, 15.11.2017թ. թիվ 6-Ա, 15.11.2017թ. թիվ 7-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

   */Զեկուցող ՝ Շ. Վահանյան/*

6. Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմում սոցիալական աշխատողի հաստիք նախատեսելու /ավելացնելու/ մասին:

   */Զեկուցող ՝ Գ. Դատումյան/*

7. Աշտարակի <<Պարարվեստի դպրոց-ստուդիա>> ՀՈԱԿ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

   */Զեկուցող ՝ Գ. Եղիազարյան /*

8. 815-049 ծածկագրով 0.3317հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   */Զեկուցող ՝ Ա. Մնացականյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

   */Զեկուցող ՝ Ա. Մնացականյան/*

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

    */Զեկուցող ՝ Ա. Մնացականյան/*

11. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

    */Զեկուցող ՝ Ա. Մնացականյան/*

12. Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին:

    */Զեկուցող ՝ Ա. Մնացականյան/*

13. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0095-0004 ծածկագրով հողամասից 0.039հա և 02-001-0095-0006 ծածկագրով հողամասից 0.0403հա հողամասերի նկատմամբ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N 1398 որոշմամբ կիրառված սահմանափակումը վերացնելու և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

    */Զեկուցող ՝ Ա. Մնացականյան/*

14. Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ. թիվ 5-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

    */Զեկուցող ՝ Շ. Վահանյան/*

15. Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի 2017 թվականի գործունեության տարեկան հաշվետվության մասին:

    */Զեկուցող ՝ Թ. Շահվերդյան /*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***Ν 2 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2017թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
7. <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

   ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

   բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

/հազ. դրամ/

| | *Վարչական բյուջե* | *Ֆոնդային բյուջե* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 521561.4 | 0 | 521561.4 |
| Ծախսային մաս | 522305.6 | 32944.3 | 555249.9 |
| Դեֆիցիտ | -744.2 | -32944.3 | -33688.5 |
| Պահուստային ֆոնդ | 0 | 0 | 0 |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 3 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2018թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/5 և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասի նախագծի առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի նախագծի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի նախագծի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին ՝ համաձայն հատված 5-ի:
6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի նախագծի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
7. <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

/հազ. դրամ/

| | *Վարչական բյուջե* | *Ֆոնդային բյուջե* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Եկամտայինմաս | 536661.4 | 6000.0 | 542661.4 |
| Ծախսային մաս | 536661.4 | 6000.0 | 542661.4 |
| Դեֆիցիտ | -1000 | -6000 | - 7000.0 |
| Պահուստային ֆոնդ | 27000 | 0 | 27000 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***<u>N 4 - Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի. ՀՀ կառավարության 22.06.2012թ. թիվ 822-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ | |

*Քվեարկությանը չի մասնակցել Արտաշես Խաչատրյանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*21.12.2017թ. N 4-Ա որոշմամբ*

| *ԳՈՒՅՔԱՀԱՐԿ* | *ՀՈՂԻ ՀԱՐԿ* | *ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ* |
|---|---|---|
| | 4 845 | Գայանե Գրիգորյան 0108-0002 |
| 70000 | | Խաչիկ Էլիբեկյան 013-007 |
| 19060 | | Վիրաբ Մանուկյան 218-020 |
| 33281 | | Ժորա Գևորգյան 078-006 |
| | 4911 | Սերոբ Թահմիզյան 327-005 |
| 44000 | | Սմբատ Մանուկյան 221-044 |
| 40000 | | Գոռ Ալեքսանյան 742-060 |
| | 46650 | Դավթյան Արամ 654-007, 651-007, |
| | 30823 | Արման Վարդանյան |
| | 7979 | Վարդան Ուռուտյան 0613-0014 |
| 5761 | 2671 | Ալվարդ Հովակիմյան 159-003 |
| | 9819 | Բաղդասարյան Սամվել 0254-0011 |
| 21801 | 7343 | Սանասար Շուխյան |
| 54173 | | Կարինե Մանգասարյան |
| 41245 | | Օֆելյա Ղոնաղչյան 049-074 |
| 14232 | | Աշոտ Կարապետյան |
| 113000 | | Շուկա Ա/Կ |
| | 8152 | Սարգիս Ամիրյան |
| 35024 | | Արտաշես Խաչատրյան |
| 45420 | 22730 | Խաչիկ Մանուկյան 206-003 |
| 96270 | 28910 | Նարգիզ Պետրոսյան |
| 100000 | | Մարտիրոս Հովհաննիսյան |
| 7290 | 6160 | Ռուզաննա Մելիքյան |
| 19562 | 3206 | Մարտիրոս Եսայան |
| 26402 | | Լիլիթ Մաթևոսյան 845-050 |
| 7527 | | Խաչատուր Հակոբյան |
| 30700 | 26209 | Մայրամ Անտանյան |
| 253085 | | Վահան Վահանյան 60RR077 |
| 52017 | 28371 | Համբարձում Կարապետյան |
| 17497 | 5761 | Հայկանուշ Եղիազարյան |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ . Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016Թ. ԹԻՎ 5-Ա, 15.11.2017Թ. ԹԻՎ 6-Ա, 15.11.2017Թ. ԹԻՎ 7-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 5 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1.Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ. թիվ 5-Ա որոշման 1-ին կետում <<265000 /երկու հարյուր վաթսունհինգ հազար/>> բառերը փոխարինել <<375000 /երեք հարյուր յոթանասունհինգ հազար/>> բառերով:

2.Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ. թիվ 6-Ա որոշման հավելված 1-ը ընդունել նոր խմբագրությամբ /հավելված 1/:

3.Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ. թիվ 7-Ա որոշման հավելված 11-ի 1-ին կետում <<170000>> թիվը փոխարինել <<290000>> թվով,

1) Նույն հավելվածի 2-րդ կետում <<140000>> թիվը փոխարինել <<230000>> թվով,

4. Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ. թիվ 7-Ա որոշման հավելված 12-ի 1-ին կետում <<230000>> թիվը փոխարինել <<290000>>թվով,

1)Նույն հավելվածի 2-րդ կետում <<170000>> թիվը փոխարինել <<230000>> թվով:

2)Նույն հավելվածի 7-րդ կետում նշված <<150000>> և <<1200000>> թվերը փոխարինել համապատասխանաբար <<200000>> և <<1600000>> թվերով,

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 01.01.2018թ.:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*21.12.2017թ. N 5-Ա որոշմամբ*

# Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Դրույքաչափը |
|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 375.000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 300.000 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 300.000 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 200.000 |

## *Աշխատակազմ*

| | | | |
|---|---|---|---|
| 5 | 1.1 | Աշխատակազմի քարտուղար | 300.000 |
| 6 | 2.3-7 | Գլխավոր մասնագետ-իրավաբան | 170.000 |
| 7 | 2.3-14 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 8 | 2.3-19 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 9 | 2.3-20 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 10 | 2.3-21 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 11 | 3.1-10 | Առաջատար մասնագետ | 100.000 |
| 12 | 3.1-23 | Առաջատար մասնագետ | 100.000 |
| 13 | 3.1-24 | Առաջատար մասնագետ | 100.000 |
| 14 | 3.1-30 | Առաջատար մասնագետ | 100.000 |

## *Ֆինանսատնտեսագիտական բաժին*

| | | | |
|---|---|---|---|
| 15 | 2.1-9 | Բաժնի պետ | 240.000 |
| 16 | 2.2-5 | Բաժնի պետի տեղակալ | 140.000 |
| 17 | 2.3-10 | Գլխավոր մասնագետ- գլխ. հաշվապահ | 200.000 |
| 18 | 2.3-15 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 19 | 2.3-11 | Գլխավոր մասնագետ | 120 000 |
| 20 | 2.3-16 | Գլխավոր մասնագետ | 120 000 |
| 21 | 3.1-25 | Առաջատար մասնագետ | 100 000 |
| 22 | 3.1-26 | Առաջատար մասնագետ | 100 000 |
| 23 | 3.1-27 | Առաջատար մասնագետ | 100 000 |
| 24 | 3.1-29 | Առաջատար մասնագետ | 100 000 |

## *Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին*

| | | | |
|---|---|---|---|
| 25 | 2.1-10 | Բաժնի պետ | 240.000 |
| 26 | 2.3-12 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 27 | 2.3-13 | Գլխավոր մասնագետ | 120.000 |
| 28 | 3.1-18 | Առաջատար մասնագետ | 100.000 |
| 29 | 3.1-19 | Առաջատար մասնագետ | 100.000 |

## *Ներքին աուդիտի բաժին*

| | | | |
|---|---|---|---|
| 30 | 2.1-11 | Բաժնի պետ | 240 000 |
| 31 | 3.1-20 | Առաջատար մասնագետ | 100 000 |

## *ՔԿԱԳ բաժին*

| | | | |
|---|---|---|---|
| 32 | 1.3-1 | Բաժնի պետ | 256623 |
| 33 | 3.2-15 | 1-ին կարգի մասնագետ | 133602 |
| 34 | 3.2-16 | 1-ին կարգի մասնագետ | 133602 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՍՏԻՔ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ /ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ/ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*<Զեկուցող՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ/*

**N 6 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետարանի առաջարկությունը /մուտք՝ 06.12.2017թ. N 414/, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/28, 48/3, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 9 և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 15-ի N 6-Ա որոշման մեջ կատարել լրացում /արձ.-12/ և հաստիքացուցակում ավելացնել սոցիալական աշխատողի մեկ հաստիքային միավոր՝

- աշխատակազմի գլխավոր մասնագետ - աշխատավարձը՝ 120 000 ՀՀ դրամ:

2. Ի գիտություն ընդունել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից անվանացանկում համապատասխան լրացում կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

ԱՇՏԱՐԱԿԻ <<ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ>> ՀՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

***N 7 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 42-րդ կետերի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակի համայնքապետարանի <<Պարարվեստի դպրոց-ստուդիա>> ՀՈԱԿ-ի գործունեությունը 2018թ.-ի հունվարի 1-ից ժամանակավորապես դադարեցնել:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

**815-049 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,3317ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 8 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 815-049 ծածկագրով 0,3317հա գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխանցվել է որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն քաղաքացու խնդրանքով և Աշտարակ համայնքի ավագանու 18.12.2001թ որոշման 16/2 արձանագրությամբ վերը նշված հողամասը հետ է վերցվել քաղաքացուց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 815-049 ծածկագրով 0,3317հա գյուղատնտեսական նշանակության հողամասը /վարելահող/ ճանաչել համայնքային սեփականություն:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***<u>N 9 - Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով Երվանդ Հովհաննիսյանի 14.12.2017թ. N1581 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, ՀՀ կառավարության 26.05.2016թ. N550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոց N80 հասցեին կից 14,8քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային գնով/ օտարել հողամասին կից հասարակական նշանակության օբյեկտի սեփականատեր Երվանդ Հովհաննիսյանին:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 10 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1], 76-80 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 46.2 կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրել և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ | |

*Քվեարկությանը չի մասնակցել Նորիկ Անդրեասյանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*21.12.2017թ. N 10-Ն որոշմամբ*

Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | 1քմ-ի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը դրամ | Սահմանափակումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| 1 | հողամաս | Ա. Մանուկյան փողոց | 095-006-ից | 172 | բնակավայրերի | | Ընդհանուր օգտագործման | 70 | |
| 2 | հողամաս | Ա. Մանուկյան փողոց | 095-004-ից | 190 | բնակավայրերի | | Ընդհանուր օգտագործման | 70 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 11 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Սամվել Միքայելյանի 14.12.2017թ. N1582 և Նավասարդ Պետրոսյանի 21.12.2017թ. N1632 դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 71 հոդվածի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1.Աշտարակ քաղաքի <<Վառոյի ձորակ>> թաղամասում գտնվող /ծածկագիր՝ 233-014/, Սամվել Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող 600քմ տնամերձ հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0143-0001 ծածկագրից 907քմ բնակավայրերի նշանակության այլ հողամասի հետ:

2.Աշտարակ քաղաքի <<Վառոյի ձորակ>>, 5-րդ թաղամաս, N70 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0239-0108/, Նավասարդ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 600քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0083-0017 ծածկագրից 520քմ բնակավայրերի նշանակության այլ հողամասի հետ:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

*Քվեարկությանը չի մասնակցել Նավասարդ Պետրոսյանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 12 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով ՀՀ ԱԱԾ-ի 19.12.2017թ. գրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 89-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ՝ Աշտարակ քաղաքի 167-074-01 և 167-065 ծածկագրերով հողամասերից 160քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ՀՀ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության անշարժ գույքի սահմանների ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-001-0095-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0,039ՀԱ ԵՎ 02-001-0095-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0,0403ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 07.09.2006Թ. N1398-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

*N 13 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1.Համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0095-0004 ծածկագրով հողամասից 0,039հա և 02-001-0095-0006 ծածկագրով հողամասից 0,0403հա հողամասերի նկատմամբ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ կիրառված <<Ժամանակավորեցվող>> սահմանափակումը օրենքով սահմանված կարգով վերացնելու և դրանք փաստացի օգտագործողներին ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.11.2017Թ. ԹԻՎ 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 14 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ. թիվ 5-Ա որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- <<Արսեն Օհանյան>> բառերը փոխարինել <<Ռազմիկ Գրիգորյան>> բառերով,
- <<Սարգիս Գրիգորյան 13000 հողի հարկ>> բառերը փոխարինել << Սարգիս Գրիգորյան 13000 գույքահարկ>> բառերով.
- <<Գայանե Գրիգորյան>> բառերը փոխարինել <<Արամայիս Զազյան>> բառերով.
- <<709618>> և <<389387>> թվերը փոխարինել համապատասխանաբար <<703356>> և <<372881>> թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը դեկտեմբերի 2017թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 13*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

*N 15 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Լսելով համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի 2017 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասի, 13-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. 2017 թվականի գործունեության վերաբերյալ Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի ներկայացրած հաշվետվությունն ընդունել Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.12.2017թ., ք.Աշտարակ

Հիմք ընդունելով N14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N 181-Ա որոշումը՝ 2016 թվականի հոկտեմբերի 24-ից Թովմաս Շահվերդյանն անցել է Աշտարակ համայնքի ղեկավարի պարտականությունների կատարմանը:

***Իմ նպատակն է Աշտարակ համայնքը դարձնել պատմամշակութային և տուրիզմի կենտրոն՝ արդիականացված ենթակառույցներով, ծառայությունների մատուցման նոր որակով, ավանդական մշակույթի զարգացման, գործազրկության ցածր ցուցանիշներով օրինակելի քաղաք:***

***Թովմաս Շահվերդյան***

«Համազգային վստահություն» խորհրդի կազմակերպած «Տարվա հանրային ծառայող և տարվա ապրանքանիշ 2017» ամենամյա ազգային մրցանակաբաշխության ժամանակ հանրային ծառայության ոլորտում սոցիոլոգիական հարցումների և փորձագիտական եզրակացության արդյունքում Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանն արժանացել է «Տարվա համայնքի ղեկավար» անվանակոչմանը:
Տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Համայնքների միավորման կողմից Աշտարակ համայնքն արժանացել է «2017թ.-ի մաքուր համայնք» մրցանակին:

Առաջնորդվելով նախընտրական ծրագրի և համայնքի հնգամյա զարգացման ծրագրի դրույթներով կից ներկայացվում է մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ[1]

*Աշտարակ համայնքը պատմամշակութային և տուրիզմի կենտրոն է՝ արդիականացված ենթակառույցներով, ծառայությունների մատուցման նոր որակով, գործազրկության ցածր ցուցանիշներով:*
*Աշտարակը նաև ավանդական մշակույթի զարգացման օրինակելի քաղաք է:*

[1] Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր՝ http://ashtarak.am/upload/DocFlow/Projects/Th1760113302631815_Ashtarak_Hngamya.pdf

# ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Հարգելի՛ աշտարակցիներ, ինձ համար չափազանց կարևոր է Ձեր վստահությունը համայնքի գործունեության կազմակերպման հարցում, ինչն էլ լինելու է իմ աշխատանքի կարևորագույն բաղկացուցիչը: Ես ապահովելու եմ բոլոր պայմանները, որոնք ձեզ հնարավորություն կտան ամբողջությամբ վերահսկել համայնքի և նրա ենթակառուցվածքների գործունեությունը՝ բացառելով չարաշահումները: Ձեր աջակցությամբ ընտրվելու դեպքում պարտավորվում եմ ապահովել իմ գործունեության թափանցիկությունը և ստորև նշված ծրագրերի համատեղ ուժերով կյանքի կոչումը.



✓ Քաղաքաշինության ներկա պահանջներին համապատասխան պահպանել քաղաքի պատմական կենտրոնի միջավայրը և ձգտել նրան բնորոշ ու հարազատ ճարտարապետական ոճով կառուցապատմանը:



✓ Իրականացնել կապիտալ շինարարություն: Քաղաքը բարեկարգել: Ստեղծել մշակութային և մարզական համալիրներ:



✓ Հետևողականորեն իրականացնել այն ծրագրերը, որոնք կնպաստեն քաղաքային զբոսայգու վերականգնմանը:

✓ Ելնելով քաղաքի առջև ծառացած բնապահպանական խնդիրներից՝ ավելացնել կանաչապատ տարածքները՝ այգիների, ձախ ափի շուկայի, դպրոցամերձ տարածքներում, բազմաբնակարան շենքերի բակերում, պուրակների տեսքով: Բարեկարգել քաղաքի առկա կանաչ գոտիներն ու պուրակները, կանաչապատել փողոցներն ու հրապարակները:



✓ Բարելավել ներքաղաքային ուղորափոխադրումները՝ երթուղիներում ներառելով քաղաքի ծայրամասային թաղամասերը:

✓ Ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ ապահովել քաղաքի սանիտարական բարվոք վիճակը, քաղաքի ողջ տարածքով կազմակերպել առանց խափանումների աղբահանություն:

✓ Համայնքը դարձնել 100% գազաֆիկացված:



✓ Շարունակել քաղաքի շուրջօրյա ջրամատակարարման ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքները:

✓ Օժանդակել համատիրություններին բազմաբնակարան շենքերում նորոգման աշխատանքներ կատարելու, շենքերի բակերում մանկական խաղահրապարակներ կառուցելու հարցում:

✓ Շարունակել ոռոգման ցանցի ընդլայնման աշխատանքները՝ ջուրը հասանելի դարձնելով յուրաքանչյուր հողակտորի:



✓ Աջակցել գյուղատնտեսության զարգացմանը, մասնավորապես՝ ավանդական խաղողագործության և պտղաբուծության բնագավառում:

✓ Աջակցել այն քաղաքացիներին և իրավաբանական անձանց, որոնք նախաձեռնություն կդրսևորեն զարգացնելու փոքր և միջին բիզնեսը:

✓ Մշտական ուշադրության կենտրոնում պահել զոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ նրանց ցույց տալով նյութական և բարոյական աջակցություն:

✓ Աջակցել երիտասարդական նախաձեռնություններին, որոնք կակտիվացնեն քաղաքի առօրյա կյանքը, միաժամանակ նրանց ակտիվորեն ներգրավել քաղաքի կառավարման գործընթացներին:



✓ Թարմացնել մանկապարտեզների և մասնագիտացված դպրոցների նյութատեխնիկական բազան:

✓ Շարունակական աջակցություն ցուցաբերել համայնքի կրթամշակութային և մարզական հիմնարկների անխափան աշխատանքի համար:



✓ Հաշվի առնելով Աշտարակի տարածաշրջանի բազմադարյան պատմությունը, պատմամշակութային կոթողները, բացառիկ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները՝ հնարավոր միջոցներ ձեռնարկել քաղաքը զբոսաշրջության կենտրոն դարձնելու համար: Աշխատանքներ կատարել Աշտարակում և նրա շրջակա բնակավայրերում էկոտուրիզմը զարգացնելու համար:

✓ Քաղաքի երբեմնի աշխույժ մշակութային կյանքը վերականգնելու նպատակով հաճախակի կազմակերպել համերգներ, թատերական ներկայացումներ, զարգացնել ժողովրդական արհեստներն ու արվեստները:

# ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

***Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառ***

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկել միջոցներ, կազմակերպել է փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակների տրամադրումը համայնքի արխիվից:

2016թ-ի հոկտեմբերի 24-ից 2017թ-ի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում համայնքապետարանում փաստաթղթաշրջանառությունը կազմել է՝

*Մտից - 3941*

- Վերադասից գրություններ - 488
- Գրություններ այլ կազմակերպություններից - 1496
- Դիմումներ – 1957

*Պատասխանված (ելից) գրություններ - 2412*

2016թ. հոկտեմբերից մինչև 2017թ. նոյեմբեր, Աշտարակի համայնքապետարանը ներգրավված է եղել շուրջ 3 տասնյակ դատական գործերում:

Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանել է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացրել է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ:

2016թթ-2017թթ ընթացքում Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից գումարվել է 12 նիստ: Հաստատվել է տարեկան աշխատանքային պլանը, միջոցառումների ցանկը: Նիստերի արդյունքում 5 անչափահասի և 3 անգործունակ ճանաչված քաղաքացու նկատմամբ սահմանվել է խնամակալություն: 4 խնամակալի տրվել է համաձայնագիր իրենց խնամարկյալի գույքի տնօրինման համար: ԽՀՀ-ն դարձել է 2 անչափահաս իրավախախտի օրինական ներկայացուցիչ և նրանց հետ մասնակցել քննչական գործողությունների և դատական նիստերի: ԽՀՀ-ն ներգրավված է եղել նաև 10 քաղաքացիական գործով դատական նիստերում՝ որպես 3-րդ անձ: Յուրաքանչյուր դատական նիստում ներկայացրել է հետազոտական ակտ և եզրակացություն: ԽՀՀ-ն ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզի Աշտարակի բաժնի և Արագածոտնի

մարզպետարանի ընտանիքի, կանանց, և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների հետ համատեղ կատարել է քաղաքային շրջայցեր և տնայցեր:

*Համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակներում ընդունել է 1035 իրավական ակտ, որից* [2]

- որոշումներ - 565
- կարգադրություններ – 470

*Կայացել է համայնքի ավագանու 12 նիստ, որից*[3]

- Հերթական - 6
- Արտահերթ- 6

*Ավագանու կողմից ընդունվել է 114 որոշում, որից*[4]

- Անհատական ակտեր – 75
- Նորմատիվ ակտեր – 39

***<u>Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառ</u>***

Համայնքի բնակիչների համար ստեղծված են բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

1. Աշտարակի համայնքապետարանի պաշտոնական կայքն է՝ http://ashtarak.am
2. Աշտարակի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեներն են՝ Ashtarak.Aragatsotn@mta.gov.am, AshtarakMunicipality@gmail.com
3. Էջեր սոցիալական ցանցերում՝
    - https://www.facebook.com/ashtarakmunicipality
    - https://ok.ru/ashtarak.municipality
    - https://www.youtube.com/user/Ashtarakcity
4. Աշտարակի համայնքապետարանի թեժ գիծ՝ +374232 35202

Տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացներում մեծ տեղ է հատկացվում համայնքի ավագանուն, որն ունի իր աշխատասենյակը, բնակիչների ընդունելության գրաֆիկը[5]:

---

[2] http://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=Voroshum

[3] http://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=Council

[4] http://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=CouncilorDecision

## Ֆինանսների բնագավառ[6]

2017թ. բյուջեի մուտքերը առ 01.12.2017թ.

**560 844 600**

### Համայնքի 2017թ. բյուջեի մուտքերի կառուցվածքը

հազար դրամ




### Համայնքի 2017թ. բյուջեի եկամուտներն ըստ վարչական և ֆոնդային մասերի

հազար դրամ




---

[5]http://ashtarak.am/upload/DocFlow/CouncilorDecision/Mo17100212473791797_We16111617161181797_grafik1.pdf

[6] http://ashtarak.am/Pages/NewBudget/in/Result.aspx

## Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող՝ 2017թ. բյուջեի եկամուտները

հազար դրամ




## Համայնքի 2017թ. բյուջեի մուտքերի կատարողականը

հազար դրամ

| Հ/հ | Ցուցանիշներ | Տարեկան պլան | 11 ամիս պլան | Տարեկան փաստացի | Կատարողականը տարեկան պլանի նկատմամբ | Կատարողականը 11 ամսվա պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Ընդամենը մուտքեր (առանց դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների)** | 776617,1 | 711899,0 | 560844,6 | 72,2% | 78,8% |
| 2 | Հողի հարկ | 28500,0 | 26125,0 | 29752,6 | 104,4% | 113,9% |
| 3 | Գույքահարկ | 131000,0 | 120083,3 | 106147,0 | 81,0% | 88,4% |
| 4 | Տուրքեր | 30840,0 | 28270,0 | 23780,3 | 77,1% | 84,1% |
| 5 | Այլ եկամուտներ | 79767,5 | 73120,2 | 66594,4 | 83,5% | 91,1% |
| 6 | Պաշտոնական դրամաշնորհներ | 251453,9 | 230499,4 | 227509,3 | 90,5% | 98,7% |
| 7 | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 255055,7 | 233801,1 | 107060,9 | 42,0% | 45,8% |

## Համայնքի 2017թ. բյուջեի մուտքերի կատարողականը



### Համայնքի 2017թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների)

հազար դրամ

| Հ/ h | Ցուցանիշներ | 2017թ. բյուջեի 11 ամսվա փաստացի | | Հ/ h | Ցուցանիշներ | 2017թ.բյուջեի 11 ամսվա փաստացի | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | գումար | տես. կշիռ | | | գումար | տես. կշիռ |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | 404753,9 | 100,0% | | **ԸՆԴԱՄԵՆԸ «ԻՐԱԿԱՆԾԱԽՍԵՐ»** (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ) | 511814,8 | 100,0 % |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 118317,5 | 29,2% | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 118317,5 | 23,1% |
| 2 | Պաշտպանություն | 0,0 | 0,0% | 2 | Պաշտպանություն | 0,0 | 0,0% |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 0,0 | 0,0% | 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 0,0 | 0,0% |
| 4 | Տնտեսական հարաբերություններ | -51267,3 | -12,7% | 4 | Տնտեսական հարաբերություններ ( ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ) | 55793,7 | 10,9% |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 83801,5 | 20,7% | 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 83801,5 | 16,4% |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 63832,3 | 15,8% | 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 63832,3 | 12,5% |
| 7 | Առողջապահություն | 0,0 | 0,0% | 7 | Առողջապահություն | 0,0 | 0,0% |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 21885,6 | 5,4% | 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 21885,6 | 4,3% |
| 9 | Կրթություն | 155251,4 | 38,4% | 9 | Կրթություն | 155251,4 | 30,3% |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 12932,9 | 3,2% | 10 | Սոցիալական պաշտպանություն | 12932,9 | 2,5% |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 0,0 | 0,0% | 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 0,0 | 0,0% |

**Համայնքի 2017թ. բյուջեի «իրական ծախսերի» կառուցվածքը**

հազար դրամ




**Համայնքի 2017թ. բյուջեի ընթացիկ ծախսերի կառուցվածքը**

հազար դրամ



## Համայնքի 2017թ. բյուջեի ծախսերի կատարողականը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների)

հազար դրամ

| Հ/հ | Ցուցանիշներ | Տարեկան պլան | 11 ամիս պլան | Տարեկան փաստացի | Կատարողականը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տարեկան պլանի նկատմամբ | 11 ամսվա պլանի նկատմամբ |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, որից՝** | 555249,9 | 508979,1 | 404753,9 | 72,9% | 79,5% |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 191291,7 | 175350,7 | 118317,5 | 61,9% | 67,5% |
| 2 | Պաշտպանություն | 200,0 | 183,3 | 0,0 | 0,0% | 0,0% |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ | -157405,7 | -144288,6 | -51267,3 | 32,6% | 35,5% |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 108000,0 | 99000,0 | 83801,5 | 77,6% | 84,6% |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 89000,0 | 81583,3 | 63832,3 | 71,7% | 78,2% |
| 7 | Առողջապահություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 70980,0 | 65065,0 | 21885,6 | 30,8% | 33,6% |
| 9 | Կրթություն | 237183,9 | 217418,6 | 155251,4 | 65,5% | 71,4% |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 16000,0 | 14666,7 | 12932,9 | 80,8% | 88,2% |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |

## Համայնքի 2017թ. բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների)

հազար դրամ

| Հ/հ | Ցուցանիշներ | Տարեկան պլան | 11 ամիս պլան | Տարեկան փաստացի | Կատարողականը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տարեկան պլանի նկատմամբ | 11 ամսվա պլանի նկատմամբ |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ «ԻՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ» (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)** | 810305,6 | 742780,1 | 511814,8 | 63,2% | 68,9% |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 191291,7 | 175350,7 | 118317,5 | 61,9% | 67,5% |
| 2 | Պաշտպանություն | 200,0 | 183,3 | 0,0 | 0,0% | 0,0% |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ ( ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ) | 97650,0 | 89512,5 | 55793,7 | 57,1% | 62,3% |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 108000,0 | 99000,0 | 83801,5 | 77,6% | 84,6% |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 89000,0 | 81583,3 | 63832,3 | 71,7% | 78,2% |
| 7 | Առողջապահություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 70980,0 | 65065,0 | 21885,6 | 30,8% | 33,6% |
| 9 | Կրթություն | 237183,9 | 217418,6 | 155251,4 | 65,5% | 71,4% |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 16000,0 | 14666,7 | 12932,9 | 80,8% | 88,2% |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |

## Համայնքի 2017թ.բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների (տեսակների)

հազար դրամ

| Հ/հ | Ցուցանիշներ | Տարեկան պլան | 11 ամիս պլան | Տարեկան փաստացի | Կատարողականը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տարեկան պլանի նկատմամբ | 11 ամսվա պլանի նկատմամբ |
| 1 | **ԸՆԴԱՄԵՆԸ «ԻՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ» (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)** | 555249,9 | 508979,1 | 404753,9 | 72,9% | 79,5% |
| 2 | Ընթացիկ ծախսեր | 522305,6 | 478780,1 | 429469,7 | 82,2% | 89,7% |
| 3 | Աշխատանքի վարձատրություն | 79022,5 | 72437,3 | 65736,6 | 83,2% | 90,7% |
| 4 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 54419,2 | 49884,3 | 33796,9 | 62,1% | 67,8% |
| 5 | Տոկոսավճարներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 |
| 6 | Սուբսիդիաներ | 210363,9 | 192833,6 | 164782,7 | 78,3% | 85,5% |
| 7 | Դրամաշնորհներ | 158800,0 | 145566,7 | 149383,8 | 94,1% | 102,6% |
| 8 | Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 18300,0 | 16775,0 | 14842,9 | 81,1% | 88,5% |
| 9 | Այլ ծախսեր | 1400,0 | 1283,3 | 926,8 | 66,2% | 72,2% |
| 10 | Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսեր | 32944,3 | 30198,9 | -24715,8 | -75,0% | -81,8% |
| 11 | Հիմնական միջոցներ | 32944,3 | 30198,9 | -24715,8 | -75,0% | -81,8% |
| 12 | Պաշարներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 13 | Բարձրարժեք ակտիվներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 14 | Չարտադրված ակտիվներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |

## Համայնքի 2017թ. բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը



## Համայնքի 2017թ. բյուջեի ծախսերի կատարողականը՝ ըստ բյուջետային ծրագրերի[7]

հազար դրամ

| Ցուցանիշներ | Տարեկան պլան | 11 ամիս պլան | Տարեկան փաստացի | Կատարողականը | |
|---|---|---|---|---|---|
| | | | | տարեկան պլանի նկատմամբ | 11 ամսվա պլանի նկատմամբ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, որից՝** | 555249,9 | 407420,7 | 404753,9 | 72,9% | 99,3% |
| **Բաժին** (Ոլորտ) 1. **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | 191291,7 | 175350,7 | 118317,5 | 61,9% | 67,5% |
| Ծրագիր 1. Համայնքում արդյունավետ տեղական ինքնակառավարում | 119944,2 | 109948,9 | 92291,5 | 76,9% | 83,9% |
| Ծրագիր 2. Համայնքում ընդհանուր բնույթի ծառայությունների իրականացում | 7997,5 | 7331,0 | 6105,3 | 76,3% | 83,3% |
| Ծրագիր 3. Տեղեկատվական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հանրային ծառայությունների ձեռք բերում | 2350 | 2154,2 | 1128,5 | 48,0% | 52,4% |
| Ծրագիր 4. Բնակչությանը մատուցվող ծառայությունների արդիականացում, հանրային մասնակցությամբ որոշումների կայացում | 25000 | 22916,7 | 1561,6 | 6,2% | 6,8% |
| Ծրագիր 5, Համայնքում ընդհանուր բնույթի այլ հանրային ծառայությունների իրականացում | 36000 | 33000,0 | 17230,6 | 47,9% | 52,2% |
| **Բաժին** (Ոլորտ) 2. **Պաշտպանություն** | 200,0 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| Ծրագիր 1. Աջակցություն համայնքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպման գործընթացին | 200 | 0,0 | 0,0 | 0,0% | #ДЕЛ/0! |
| **Բաժին** (Ոլորտ) 3. **Հասարակական կարգ,անվտանգություն և դատական գործունեություն** | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| **Բաժին** (Ոլորտ) 4. **Տնտեսական հարաբերություններ** | -157405,7 | -144288,6 | -51267,2 | 32,6% | 35,5% |
| Ծրագիր 1. Համայնքի վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործում, ինչպես նաև աջակցություն գյուղատնտեսության ոլորտում իրականացվող համապետական միջոցառումներին | 150 | 137,5 | 0,0 | 0,0% | 0,0% |
| Ծրագիր 3. Համայնքում նոր թաղամասերի գազաֆիկացում | 1500 | 1375,0 | 536,5 | 35,8% | 39,0% |
| Ծրագիր 4. Համայնքի ճանապարհային տրանսպորտային համակարգերի օգտագործում, կառուցում և պահպանում | 96000 | 88000,0 | 55257,2 | 57,6% | 62,8% |
| Ծրագիր 5. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացում | -255055,7 | -233801,1 | -107060,9 | 42,0% | 45,8% |
| **Բաժին** (Ոլորտ) 5. **Շրջակա միջավայրի պաշտպանություն** | 108000,0 | 80666,7 | 83801,5 | 77,6% | 103,9% |

[7] Աղյուսակում ներառված չեն հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր ոլորտի ծախսերը:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր 1. Համայնքը դարձնել մաքուր և հրապուրիչ շրջակա միջավայրով բնակավայր, արդյունավետ աղբահանության ծրագրերի իրականացում | 88000 | 80666,7 | 83801,5 | 95,2% | 103,9% |
| Ծրագիր 2. Համայնքի աղբահանության ծառայության նյութատեխնիկական բազայի ավելացում | 20000 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| **Բաժին** (**Ոլորտ**) 6. **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայ**. | 89000,0 | 65000,0 | 63832,3 | 71,7% | 98,2% |
| Ծրագիր 1. Համայնքում բարեկարգման աշխատանքների իրականացում, բազմաբնակարան շենքերի սպասարկում և պահպանում | 68000 | 65000,0 | 63832,3 | 93,9% | 98,2% |
| Ծրագիր 2. Համայնքում փողոցների լուսավորության համակարգի անխափան աշխատանքի ապահովում | 21000 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| **Բաժին** (**Ոլորտ**) 7. **Առողջապահություն** | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| **Բաժին** (**Ոլորտ**) 8. **Հանգիստ**, **մշակույթ**, **կրոն** | 70980,0 | 48106,7 | 21885,6 | 30,8% | 45,5% |
| Ծրագիր 1. Համայնքում սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում, անհատ մարզիկների ինքնաճանաչում | 2000 | 1833,3 | 1500,0 | 75,0% | 81,8% |
| Ծրագիր 2. Համայնքային ենթակայության մշակութային հիմնարկների բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում | 11200 | 10266,7 | 8821,4 | 78,8% | 85,9% |
| Ծրագիր 3. Համայնքում մասսայական միջոցառումների կազմակերպում, ավանդական մշակույթի պրոպագանդում | 3500 | 3208,3 | 935,0 | 26,7% | 29,1% |
| Ծրագիր 4. Քաղաքացիական հասարակության կառույցների, կրոնական և երիտասարդական կազմակերպությունների աջակցում և գործունեության ապահովում | 4780 | 4381,7 | 2870,0 | 60,0% | 65,5% |
| Ծրագիր 5. Մշակույթի տների կապիտալ նորոգում և ծառայությունների արդիականացում | 15500 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| Ծրագիր 6. Բռնադատվածների հուշարձանի կառուցում | 3000 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| Ծրագիր 7. Հանգստի կազմակերպմանն ու առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ենթակառույցների ստեղծում | 31000 | 28416,7 | 7759,2 | 25,0% | 27,3% |
| **Բաժին** (**Ոլորտ**) 9.**Կրթություն** | 237183,9 | 181668,6 | 155251,3 | 65,5% | 85,5% |
| Ծրագիր 1. Համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում | 145050 | 132962,5 | 115364,9 | 79,5% | 86,8% |
| Ծրագիր 2. Համայնքի արտադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում | 50333,9 | 46139,4 | 37976,4 | 75,4% | 82,3% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր 3. Համայնքի կրթական այլ հաստատություններին, ուսանողներին, սովորողներին ֆինանսական աջակցության տրամադրում | 2800 | 2566,7 | 1910,0 | 68,2% | 74,4% |
| Ծրագիր 4. Արտադպրոցական դաստիարակության հիմնարկներում կապիտալ նորոգման աշխատանքների իրականացում | 7000 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| Ծրագիր 5. “Համիկ”, “Հովիկ”, “Մանուշակ”, “Արևիկ”, “Արաքս Մուրադյան” ՆՈՒՀ-երում կապիտալ նորոգման աշխատանքների իրականացում | 32000 | 0,0 | 0,0 | 0,0% | 0,0% |
| **Բաժին** (**Ոլորտ**) 10. **Սոցիալական պաշտպանություն** | 16000,0 | 916,7 | 12932,9 | 80,8% | 1410,9% |
| Ծրագիր 1. Համայնքի բնակչության որոշակի խավերին ժամանակավոր անաշխատունակության դեպքում ֆինանսական աջակցության տրամադրում | 1000 | 916,7 | 909,9 | 91,0% | 99,3% |
| Ծրագիր 2. Աջակցություն հարազատին կործրածներին | 1000 | 916,7 | 0,0 | 0,0% | 0,0% |
| Ծրագիր 3. Սոցիալական օգնության տրամադրում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, պատանի երկրապահներին, ինչպես նաև սոցիալական խոցելի ընչազուրկ խմբերին և կարիքավորներին | 14000 | 12833,3 | 12023,0 | 85,9% | 93,7% |

**Համայնքի** 2017**թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ բյուջետային ծրագրերի**

հազար դրամ



Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից հաշվետու ժամանակահատվածում համակարգի գնահատման աուդիտ է կատարվել համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունում:

***Պաշտպանության կազմակերպման բնագավառ***

Օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.

***Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառ***

Իրականացվում են միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով: Կազմված են ԱԻ և ԱՌՆ համապատասխան պլաններն ու ուղեցույցները:

***Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ***

- Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տվել է 55 ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն):
- Օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցվել է 55 ճարտարապետաշինարարական նախագիծ, տրվել է շինարարության (քանդման) 59 (1) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.
- Սահմանված կարգով ձևակերպվել է 16 ավարտված շինարարության շահագործման փաստագրում.
- Կանխարգելվել ու կասեցվել է ինքնակամ 2 շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովվել դրանց հետևանքների վերացումը.
- Սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

- Իրականացվում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմվել է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը.
- Իրականացվել է աճուրդ – 21 հատ, 6.8648 հա, 32591200 գումար,
- Կատարվել է անշարժ գույքի հասցեավորում - 174 հատ
- Կառուցապատման իրավունքով տրամադրվել են 0.936 հա հողատարածքներ:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում 2017թ.-ին կատարվել են բազմաթիվ աշխատանքներ, մասնավորապես՝

- "Կոմիտասի" անվան զբոսայգու բարեկարգման, կանաչապատում, ոռոգման համակարգի վերականգնում,
- Կենտրոնական փողոցների դեկորատիվ ծառերի ձևավորում և բների սպիտակեցում,
- Պուրակների ծաղկապատման և բարեկարգման աշխատանքների կազմակերպում (Վ.Պետրոսյանի պուրակ, Ն.Աշտարակեցու հրապարակի կանաչ գոտիներ),
- Պուրակների և կանաչ գոտիների ոռոգման համակարգի վերականգնում,
- Կենտրոնական փողոցների և հրապարակի գծանշում,
- Փողոցների և բազմաբնակարան շենքերի բակերի փոսային նորոգման և քանդված հատվածների վերականգնում,
- Փողոցների լուսավորության համակարգի արդիականացում և ընդլայնում,
- Բազմաբնակարան շենքերի տանիքների, ջրի և կոյուղու համակարգերի մասնակի նորոգումներ, ամենօրյա սպասարկում,
- Մանկական խաղային անկյունների, խաղահրապարակների կառուցում,
- Մեծ և փոքր աղբարկղերի տեղադրում,
- Նստարանների տեղադրում,
- Կենտրոնական փողոցների սանմաքրում և աղբահանություն:

***<u>Հողօգտագործման բնագավառ</u>***

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմվում են համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացվում համայնքի ավագանու հաստատմանը.

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օտարվել, օգտագործման իրավունքով տրամադրվել է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասեր:

Վերահսկողություն է իրականացվում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Իրականացվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը:

***<u>Տրանսպորտի բնագավառ</u>***

«Դավթյան տրանս» ՍՊԸ-ի միջոցով կազմակերպել և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը:

Ֆրանսիայից նվիրաբերված ավտոբուսով կազմակերպվում է համայնքի հանրակրթական դպրոցների աշակերտների անվճար տեղափոխումը դպրոցից՝ տուն և տնից՝ դպրոց:

***<u>Առևտրի և ծառայությունների բնագավառ</u>***[8]

- Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման 48 թույլտվություն:
- Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման 7 թույլտվություն.
- Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու 7 թույլտվություն:
- Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի 1 թույլտվություն.
- Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ)

---

[8] http://ashtarak.am/Pages/NewBudget/in/Result.aspx

սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի 15 թույլտվություն.

- Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի 4 թույլտվություն.
- Աշտարակ համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու 7 թույլտվություն.
- Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու 16 թույլտվություն:

***<u>Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ</u>***

Կազմակերպվել և կառավարվում է համայնքային ենթակայության մանկապարտեզների, մշակույթի տների, կրթական և մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

Սկսվել են համայնքային ենթակայության մանկապարտեզների և մասնագիտացված դպրոցների նյութատեխնիկական բազայի թարմացման աշխատանքները, այդ թվում իրականացվել են նաև տանիքների, խմբասենյակների մասնակի վերանորոգումներ, գնվել է նոր սպասք, անկողնային պարագաներ և այլն: Ամենօրյա հսկողության տակ է նաև մանկապարտեզների սննդի որակը:

Կրթամշակութային ՀՈԱԿ-ների կողմից ծառայություններ ստացողների ընդհանուր քանակը կազմում է 1018, որից

- Երաժշտական դպրոց -262
- Պարարվեստի դպրոց-ստուդիա-40
- Գեղարվեստի դպրոց-76
- Մանկապարտեզներ -640

Կազմակերպվել է մոտ 30 համաքաղաքային միջոցառում:

***<u>Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ</u>***

Աջակցություն է տրվել Աշտարակ համայնքում շահագործման հանձնված մարզադպրոցին, անհատ և խմբային մարզիկներին, որոնք ներկայացել են տարբեր

հանրապետական և միջազգային մրցաշարերի: Կազմակերպվել են համայնքի ղեկավարի մրցանակի ֆուտբոլի և շախմատի քաղաքային մրցաշարեր:

***Սոցիալական պաշտպանության բնագավառ***

Միջոցներ են ձեռնարկվել հաշմանդամներին, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Մասնավորապես 256 ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

Զոհված ազատամարտիկների 26 ընտանիք համայնքապետարանից ստանում է ամենամսյա նպաստ:

***Գյուղատնտեսության բնագավառ***

Կատարվել են համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործման, դրանց շինարարության և վերանորոգման աշխատանքներ:

***Անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներ***

Լիազոր մարմնին տրամադրվել է կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն և աջակցվել է անասնաբուժական ծառայության աշխատանքներին:

***Զբոսաշրջության բնագավառ***

2016թ-ին զբոսաշրջության պետական կոմիտեի կողմից ներկայացված և 4 մլն դոլար ֆինանսավորում ունեցող Աշտարակ քաղաքի զարգացման ծրագիրն այժմ ակտիվ փուլում չէ, սակայն նախատեսվում է ավարտին հասցնել 2018-2019թթ. ընթացքում:

Ներկայացվել և ավագանու կողմից հաստատվել է “Աշտարակ քաղաքում ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման հայեցակարգը”[9], որը գնահատում է համայնքի զբոսաշրջային հատվածի զարգացման խնդիրներն ու միտումները, սահմանում է ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները, դիտարկում է այս ոլորտի զարգացման արդյունավետությունը համայնքի զարգացման համար:

---

[9] http://ashtarak.am/upload/DocFlow/CouncilorDecision/Tu1741815494181797_Ashtarak_TurismHayecakarg.pdf